ARMENIAN

# Քոլեջի/Մասնագիտական **TAP** քարտի դիմում

Քոլեջի/Մասնագիտական TAP քարտի ծրագիրը հեշտացնում է քոլեջի կամ մասնագիտական ուսանողների համար Metro նվազեցված ուղեվարձի համար իրավունակ համարվելը: Իրավունակության պահանջների և լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 866.827.8646 հեռախոսահամարով:

## ԴԻՄՈՒՄԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

> Բոլոր դիմողները պետք է լրացնեն այս դիմումի ԲԱԺԻՆՆԵՐ I, II և III, ինչպես նաև ներկայացնեն վավերական լուսանկարով ID-ի պատճենը:

## ԲԱԺԻՆ I – ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

> Հետևյալ ուղեցույցներին չհետևող բոլոր լուսանկարով դիմումները չեն մշակվի:

### ԿՊՑՐԵՔ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՎԱՆԴԱԿԻ ՄԵՋ

- Միայն ամբողջ դեմքի լուսանկար
- Լուսանկարի չափսերը՝ 2″ × 2″ կամ 1″ × 1¼″
- Գլխարկներ կամ արևային ակնոցներ չեն թույլատրվում
- Լուսանկարը պետք է տեղավորվի հատկացված տարածք մեջ (կտրեք, որ տեղավորվի)
- Լուսանկարը պետք է լինի լուսանկարչական թղթի վրա և ոչ պատճենահանված թղթի վրա

1" × 1¼"

2" × 2"

## ԲԱԺԻՆ II – ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻՄՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՊԵՏՔ Է ԼՐԱՑՎԻ ԴԻՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ )

| | | |
|---|---|---|
| Ազգանուն | Անուն | Հայրանուն/Սկզբնատառ |
| Փողոցի անուն | | Բնակարան # |
| Քաղաք \| Նահանգ \| Փոստային ինդեքս | Ծննդյան թվական | Հեռախոսահամար |
| Ուսումնական հաստատության անվանում | | Էլ. փոստ |
| Փողոցի անուն | | Քաղաք \| Նահանգ \| Փոստային ինդեքս |

## ԲԱԺԻՆ III – ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԴԻՄԵԼՈՒ ԱՄՍԱԹՎԵՐԸ

Քոլեջի/Մասնագիտական TAP քարտի համար դիմող իրավունակ դիմողները կարող են դիմումները ներկայացնել ընթացիկ ուսումնական կիսամյակի ընթացքում ցանկացած ժամանակ: տման դեպքում դիմորդները կստանան քարտ, որի ժամկետը լրանում է թողարկման ամսաթվից մեկ տարի անց:

Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները պետք է ներկայացնեն Los Angeles վարչական շրջանում հավատարմագրված ուսումնական հաստատությունում սովորելու ապացույց: Բակալավրիատի ուսանողները 3 հաջորդական ամիսների ընթացքում պետք է գրանցված լինեն շաբաթական նվազագույնը 12 միավորի կամ 12 ժամվա լսարանային ուսուցման համար: Մագիստրատուրայի ուսանողները 3 հաջորդական ամիսների ընթացքում պետք է գրանցված լինեն շաբաթական նվազագույնը 8 միավորի լսարանային ուսուցման համար: Եթե Դուք գրանցված եք ամառային ծրագրի համար, որը 3 ամսից և/կամ 12 միավորից պակաս է, Դուք դեռ կարող եք իրավունակ լինել, եթե Դուք համապատասխանել եք պահանջներին նախորդ գարնանային կիսամյակի ընթացքում: Այս դեպքում դիմումի հետ պետք է ներկայացվի և՛ ամառային, և՛ գարնանային փաստաթղթերը:

Դիմողները պետք է ներառել իրավունակությունը ապացուցող ներքոհիշյալ փաստաթղթերից մեկը՝ վավերական լուսանկարով նույնականացման քարտի կամ լուսանկարով նույնականացման քարտի պատճենի (եթե ուղարկում է փոստով) հետ մեկտեղ: *Ծանոթություն. փաստաթղթերում պետք է նշված լինեն դասերը սկսվելու և ավարտվելու ամսաթվերը:*

- ☐ ______ Ընթացիկ գրանցման/վճարի ստացական, որը ներառում է ուսումնական հաստատության կիսամյակը, դասացուցակը և միավորները:
- ☐ ______ Համակարգչից տպված փաստաթուղթ՝ գրանցված միավորներով և/կամ լսարանային ժամերով: Այս փաստաթուղթը պետք է կնքված լինի գրանցողի գրասենյակի կողմից:
- ☐ ______ Ընթացիկ պայմանագիր կամ համաձայնագիր Ձեր և ուսումնական հաստատության միջև՝ գրանցված միավորներով և/կամ լսարանային ժամերով:
- ☐ ______ Ընթացիկ գրանցման ձևաթուղթ կամ ցուցակագրման վկայական՝ գրանցված միավորներով և/կամ լսարանային ժամերով:
- ☐ ______ Ուսումնական հաստատության պաշտոնական ձևաթղթի վրա գրված նամակ՝ պաշտոնյայի օրիգինալ ստորագրությամբ, որը ներկայացնում է սկսվելու և ավարտվելու ամսաթվերը և հաճախման միավորների և/կամ օրերի և ժամերի ընդհանուր քանակը: Ուսումնական հաստատության նամակի պատճեն չի ընդունվի:

Ես հասկանում եմ, որ կարող եմ կորցնել Նվազեցված ուղեվարձի TAP քարտը օգտագործելու հնարավորությունը, եթե ես այն սխալ գործածեմ կամ եթե ես նշաններ դնեմ, վրան նկարեմ կամ վնասեմ փոխադրումների գործակալության անձնական սեփականությունը: Սույնով ես հաստատում եմ, որ հետևի կողմում ներկայացված տեղեկությունները ճշմարիտ են և ճիշտ:

Դիմորդի ստորագրություն ______________________ Ամսաթիվը ______________

tap

## ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Ներկայացման ենթակա լրացված դիմումը պետք է պարունակի հետևյալը՝

- Չվերադարձվող $1 դիմումի վճար: Եթե դիմումը ուղարկվում է փոստով, խնդրում ենք ուղարկել չեկ կամ դրամական փոխադրություն Metro–ի անունով:
- Վերջերս արված 2″ × 2″ կամ 1″ × 1¼″ ամբողջ դեմքի լուսանկար (ոչ մի գլխարկ կամ արևային ակնոցներ) լուսանկարչական թղթի վրա՝ կպցված բաժին I-ի վանդակի մեջ:
- Դիմումի լրացված ձևաթուղթ՝ բաժիններ I, II և III:
- Վավերական լուսանկարով նույնականացման քարտի պատճեն (*Օրինակ*՝ Կալիֆորնիայի վարորդական իրավունքի վկայական կամ Կալիֆորնիայի նույնականացման քարտ, ուսումնական հաստատության լուսանկարով ID կամ անձնագիր):
- Լիաժամկետ ընդգրկվածության ապացույց:

Անձամբ ներկայացրեք Ձեր լրացված դիմումի փաթեթը ստորև ներկայացված հետևյալ Metro Հաճախորդների սպասարկման կենտրոններից մեկին կամ փոստով ուղարկեք հետևյալ հասցեով՝

- TAP Reduced Fare Office
  One Gateway Plaza
  Mail Stop 99-PL-4
  Los Angeles, CA 90012-2952

Նվազեցված ուղեվարձի TAP քարտերը փոստով կուղարկվեն իրավունակ դիմողներին ստուգման գործընթացը ավարտվելուց հետո: Metro Հաճախորդների սպասարկման կենտրոն բերված դիմումների մշակման ժամկետը 20 աշխատանքային օր է: Փոստով ուղարկված դիմումների համար լրացուցիչ ժամանակ է պահանջվում:

## METRO ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ (ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ ՔՈԼԵՋԻ/ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ TAP ՔԱՐՏԻ ԴԻՄՈՒՄՆԵՐ)

**Baldwin Hills/Crenshaw**
3650 Martin Luther King Bl
Ste 189
Los Angeles, CA

**East Los Angeles**
4501-B Whittier Bl
Los Angeles, CA

**Union Station East**
One Gateway Plaza
Los Angeles, CA

**Wilshire/Vermont**
3183 Wilshire Bl
Ste 174
Los Angeles, CA

## ԿՈՐՑՎԱԾ, ԳՈՂԱՑՎԱԾ ԿԱՄ ՎՆԱՍՎԱԾ TAP ՔԱՐՏԵՐ

- Անմիջապես զանգահարեք TAP Սպասարկման կենտրոն՝ 866.827.8646 հեռախոսահամարով՝ կորցված, գողացված կամ վնասված TAP քարտի վերաբերյալ հայտնելու համար:
- Վճարեք չվերադարձվող անվանական փոխարինման վճարը:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այցելեք՝ *taptogo.net*
866.827.8646